ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» 12 2015թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-29/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2015թ. թիվ 1/73-1/793807-15 գրությամբ ներկայացված «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02230805) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 17.03.2015թ. թիվ 13-01/371 գրության հիման վրա դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու

հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 17.03.2015թ. թիվ 13-01/371 գրությունը:

2. «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 01.04.2015թ. թիվ 09/032-586 գրությամբ դիմել է «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ին:

«ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն 09.04.2015թ. թիվ 125/01 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի միջև 25.12.2014թ. կնքվել է Բ 184/14 գնման պայմանագիր:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 2014թ. դեկտեմբեր ամսին և դրան հաջորդող ամբողջ հունվար ամսին ամբողջությամբ կաթվածահար էր եղել և ռուսական և հայկական էկոնոմիկան, դոլարի կտրուկ սղաճի պատճառով (մոտ 30 %) Ընկերությունը ի վիճակի չէր ժամանակին (45 օր պայմանագրի ստորագրման պահից) կատարել իր վրա դրված պայմանագրային պարտավորությունները:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված հանգամանքների մասին գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, որով մանրամասն տեղեկացրել է իրադրության մասին:

Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն խնդրել է Կենտրոնին հաշվի առնել նշված ֆորսմաժորային իրադրությունը և մեղմացնել Ընկերության նկատմամբ պատժամիջոցները:

«ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի տնօրենը Կենտրոնում 2015թ. նոյեմբերի 30-ին ժամը 17:20-ին կազմակերպված ՍՑ-ԳԲԽ-29/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին հայտնել է, որ Պայմանագրի լուծման արդյունքում հաշվարկված տուժանքը Ընկերության կողմից վերականգնվել է, միաժամանակ ներկայացնելով 60 000 ՀՀ դրամը «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված լինելու հանգամանքը հավաստող 30.11.2014թ. N 147 վճարման հանձնարարագրի պատճենը:

3. «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.03.2015թ. թիվ 13-01/371 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի հետ 25.12.2014թ. կնքված Բ 184/14 ծածկագրով էլեկտրասարքավորումների գնման մասին պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր) Պատվիրատուի կողմից 09.03.2015թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի կատարման ժամկետը խախտելու հիմքով:

Պատվիրատուն «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ին 17.03.2015թ. թիվ 130-01/370 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի և Ընկերության միջև կնքված Պայմանագիրը լրացել է նույն թվականի մարտի 6-ին, սակայն Ընկերության կողմից՝ որպես վաճառող որևէ գործողություն չի իրականացվել պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետով, 3.1.1, 3.1.7 ենթակետերով և 3.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ վերապահված գնորդի իրավունքը՝ Պատվիրատուի կողմից 2015 թվականի մարտի 9-ին միակողմանի լուծվել է Պայմանագիրը:

Կնետրոնին ուղված 09.04.2015թ. թիվ 13-01/523 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի միջև 25.12.2014թ. կնքվել է Բ184/14 ապրանքի առուվաճառքի պայմանագիր՝ էլեկտրական սարքերի, գործիքների, նյութերի, պահեստամասերի ձեռքբերման վերաբերյալ: Պայմանագրով աշխատանքների կատարման ավարտման ժամկետը սահմանվել է 45 աշխատանքային օր՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից (մինչև 2015 թվականի մարտի 7-ը ներառյալ): Սակայն «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն մինչև նշված օրը որևէ գործողություն չի կատարել իր պայմանագրային պարտավորությունների կատարման ուղղությամբ՝ խախտելով Պայմանագրի 2.1 կետով սահմանված ժամկետը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ելնելով տվյալ հանգամանքից և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետը և 3.1.7 ենթակետի «բ» պարբերությամբ

վերապահված Պատվիրատուի իրավունքը, 2015 թվականի մարտի 9-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը և 17.03.2015թ. թիվ 13-01/370 գրությամբ ծանուցել «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն գտնում է, որ իր կողմից արդարացի և ճիշտ որոշում է ընդունվել:

4. ՍՑ-ԳԲԽ-29/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2015թ. թիվ 1/73-1/793807-15 գրությամբ «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ի միջև 25.12.2014թ. կնքվել է Բ 184/14 գնման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել են երկու առանձին տեսակի ապրանքների ձեռքբերում՝ ***սեղմակ միացնող մամլող ՍԱՍ-400-1 և սեղմակ անցումային ՊԱՍ-400***:

3. Ընկերությունը 11.02.2015թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «ՄԱՄԼԻՉ-ՆԿ» ՍՊԸ-ի միջև 25.12.2014թ. կնքվել է Բ 184/14 ապրանքի առուվաճառքի 600 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պայմանագիր, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014թ. դեկտեմբեր ամսին տեղի ունեցած արտարժույթի գնային սղաճը բարձացրել է Ընկերության կողմից մատակարարվող ապրանքների շուկայական արժեքները, ուստի խնդրել է Պայմանագրի գնի մեջ կատարել փոփոխություն:

4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 17.03.2015թ. թիվ 13-01/370 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.7 կետով և 3.1.7 ենթակետի «բ» պարբերությամբ վերապահված Պատվիրատուի իրավունքը, 2015 թվականի մարտի 9-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. Կենտրոնը 23.10.2015թ. թիվ 01/04.1/[2116]-15 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով հաշվարկված վնասի, տույժի և տուգանքի գումարներն «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի կողմից վերականգնելու վերաբերյալ՝ առանձին նշելով վերոհիշյալ գումարների չափը:

6. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 29.10.2015թ. թիվ 13-01/1599 գրությամբ տեղեկացրել է, որ «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 60 000 ՀՀ դրամի չափով տուժանք, սակայն վերջինիս կողմից այդ գումարը չի վճարվել:

7. Ընկերության տնօրենը Կենտրոնում 2015թ. նոյեմբերի 30-ին ժամը 17:20-ին կազմակերպված ՍՑ-ԳԲԽ-29/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին հայտնել է, որ Պայմանագրի լուծման արդյունքում հաշվարկված տուժանքը Ընկերության կողմից վերականգնվել է, միաժամանակ ներկայացնելով 60 000 ՀՀ դրամը «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված լինելու հանգամանքը հավաստող 30.11.2014թ. N 147 վճարման հանձնարարագրի պատճենը:

5. ՍՑ-ԳԲԽ-29/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2015թ. թիվ 1/73-1/793807-15 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 09.04.2015թ. թիվ 13-01/523, 29.10.2015թ. թիվ 13-01/1599 գրությունները և կից փաստաթղթերը, Ընկերության 09.04.2015թ. թիվ 125/01 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ

խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Այսպիսով, «ՄԱՄԼԻՋ-ՆԿ» ՍՊԸ-ն Բ 184/14 գնման պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի 7-րդ ՝ (***սեղմակ միացնող մամլող ՍԱՍ-400-1***) և 12-րդ (***սեղմակ անցումային ՊԱՍ-400***) չափաբաժիններով

նախատեսված ապրանքները չմատակարարելով՝ Պայմանագրի շրջանակներում **ավելի քան մեկ անգամ** թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների խախտումը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի հետևանքով հաշվարկված տույժի և տուժանքի չափերը չեն գերազանցում գնումների բազային միավորը և Ընկերության կողմից մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրումը վերականգնվել է, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «ՄԱՄԼԻԶ-ՆԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2015թ. թիվ 1/73-1/793807-15 գրությամբ «ՄԱՄԼԻԶ-ՆԿ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02230805) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-29/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան